ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 1998թ N 249

ք. Ստեփանակերտ

«Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին

«Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան հաստատել «Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ուղղիչ գործակիցները»՝ համաձայն հավելվածի.[*2)]

2. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ սահմանել, որ՝

ա/ *(ուժը կորցրած է ճանաչվել)*[*3)]

բ/ օրենքի 52-րդ հոդվածի «գ» կետում նշված ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղեր են համարվում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման, մասնավորապես՝ ավտոմեքենաների անվադողերի երեսապատման, շարժիչի նորոգման, թափքի և այլ մասերի հարդարման, ներկման, շարժվող մասերի նորոգման, էլեկտրական սարքերի նորոգման, <u>ավտոմեքենայի կամ դրա առանձին հատվածների լվացման համար նշանակված աշխատատեղերը,</u> ավտոմեքենաների անվադողերի հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցման աշխատատեղերը և այլն:

3. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ կառավարության 1998թ. սեպտեմբերի 8-ի թիվ 176 որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի «Վարսավիրական ծառայության» համար արտոնավճարի (եկամտահարկի նվազագույն վճարի) չափի սահմանված գործակիցը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1998թ. նոյեմբերի 1-ից:

ԼՂՀ վարչապետ Ժ.ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված[*2)]
ԼՂՀ կառավարության
29 մարտի 2005թ. թիվ 147 որոշման

Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ուղղիչ գործակիցները

ՀՀ	Գոտին	Գործակիցը
1	2	3
1.	Ք. Ստեփանակերտ Առաջին գոտու տարածքը սահմանագծվում է՝ հետևյալ փողոցներով՝ Թումանյան և Կամո փողոցների հատումից սկսած Կամո փողոցով մինչև Դավիթ Բեկ փողոցի հետ հատումը, Դավիթ Բեկ փողոցով մինչև Կարո Ալվարյան փողոցի հետ հատումը, Կարո Ալվարյան փողոցով մինչև Վարդան Մամիկոնյան փողոցի հետ հատումը, Վարդան Մամիկոնյան փողոցով մինչև Անդրանիկ փողոցի հետ հատումը, Անդրանիկ փողոցով մինչև Թումանյան փողոցի հետ հատումը, Թումանյան փողոցով մինչև Կամո փողոցի հետ հատումը:	1.3
	Երկրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են առաջին գոտու արտաքին սահմանների հետ, իսկ արտաքին սահմանները անցնում են Թումանյան և Կամոյի փողոցների հատումից սկսած, Թումանյան փողոցով մինչև Տիգրան Մեծ փողոցի հետ հատումը, Տիգրան Մեծ փողոցով մինչև Տիգրան Մեծ թիվ 2 կիսակառույց շենքի հարակից ճանապարհի / «Թիվ 1 համաշինարարական» ՓԲԸ տանող ճանապարհ / հետ հատումը, այդ ճանապարհով մինչև Մեսրոպ Մաշտոց փողոցի հետ հատումը, Մեսրոպ Մաշտոց փողոցով մինչև Ալեքսեյ Հեքիմյան փողոցի հետ հատումը, Ալեքսեյ Հեքիմյան փողոցով մինչև Ստարավոյտովա փողոցի հետ հատումը, Ստարավոյտովա փողոցով մինչև Ադմիրալ Իսակով փողոցի հետ հատումը, Ադմիրալ Իսակով և Սասունցի Դավիթ փողոցներով մինչև Գեներալ Սարդարյան փողոցի հետ հատումը, Գեներալ Սարդարյան փողոցով մինչև Գրիգոր Լուսավորիչ փողոցի հետ հատումը, Գրիգոր Լուսավորիչ փողոցով մինչև Անդրանիկ փողոցի հետ հատումը, Անդրանիկ փողոցով մինչև Անդրանիկ փողոցի աստիճանասանդուղքը, աստիճանասանդուղքով մինչև Վարդան Մամիկոնյան փողոցը, Վարդան Մամիկոնյան փողոցով մինչև Ակադեմիկ Սախարով փողոցի հետ հատումը, Ակադեմիկ Սախարով փողոցով մինչև Մարտունի փողոցի հետ հատումը, Մարտունի փողոցով մինչև Փետրվարի 20 փողոցի հետ հատումը, Փետրվարի 20 փողոցով մինչև Սպանդարյան փողոցի հետ հատումը, Սպանդարյան փողոցով մինչև Արսեն Տերտերյան փողոցի հետ հատումը, Արսեն Տերտերյան փողոցով մինչև Թումանյան փողոցի հետ հատումը	1.2
	Երրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են երկրորդ գոտու արտաքին սահմանների հետ, իսկ արտաքին սահմանները անցնում են՝ Առաքել Առաքելյան փողոցի և Առաքել Առաքելյան փողոցը հատող ջրհավաքի հատումից սկսած, ջրահավաքով մինչև Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհի հետ հատումը,Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհով մինչև երկաթգծի կայարան տանող ավտոճանապարհի հետ հատումը, այդ ավտոճանապարհով մինչև Կառկառ գետի կամուրջը, Կառկառ գետի հունով՝ հոսանքին հակառակ մինչև Վարարակն գետը, Վարարակն գետի հունով մինչև Վարարակն գետի վրա կառուցված երկաթբետոնյա պատնեշը, ապա այդ պատնեշի դիմաց գտնվող ձորով մինչև Գեներալ Մադաթով 4 փակուղու և Միխաիլ Դուդին փողոցների հատման կետը, Միխաիլ Դուդին փողոցով մինչև Վաղարշ Վաղարշյան փողոցի հետ հատումը, Վաղարշ Վաղարշյան փողոցով մինչև Ուլուբաբյան փողոցի հետ հատումը, Ուլուբաբյան փողոցով մինչև Մարիետա Շահինյան փողոցի հետ	1.1

	հատումը, Մարիետա Շահինյան փողոցով մինչև Մարիետա Շահինյան փողոցի թիվ 21 տան հարակից ծորն իջնող հետիոտն ճանապարհը, այդ ճանապարհով մինչև Պուշկին փողոցի հետ հատումը, Պուշկին փողոցով մինչև Բեկզադյան փողոցի հետ հատումը, Բեկզադյան փողոցով մինչև Զորգե փողոցի հետ հատումը, Զորգե և Առաքել Առաքելյան փողոցներով մինչև Առաքել Առաքելյան փողոցը հատող ջրահավաքը:	
	Չորրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են երրորդ գոտու արտաքին սահմանների հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են Ստեփանակերտ քաղաքի սահմանագծով:	*1.0*
2.	*Շրջկենտրոնների համար*	*1.0*
3.	*Գյուղական վայրերի համար*	
	ա/ մինչև 100 բնակիչ ունեցող բնակավայրեր	*0.25*
	բ/ 100-500 բնակիչ ունեցող բնակավայրեր	*0.3*
	գ/ 500-1000 բնակիչ ունեցող բնակավայրեր	*0.4*
	դ/ 1000 և ավելի բնակիչ ունեցող բնակավայրեր	*0.5*

ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Ս. Գրիգորյան

**1) ԼՂՀ կառավարության 10.12.99թ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 249 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 137 որոշման խմբագրությամբ:*

**2) ԼՂՀ կառավարության 29.03.05թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 249 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 147 որոշման խմբագրությամբ:*

**3) ԼՂՀ կառավարության 22.03.11թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 24-ի N 249 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 151-Ն որոշման խմբագրությամբ:*